ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/03

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի՝

Մասնակցությամբ՝

«Վագտրանս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ.Ենգոյանի (լիազորագիր՝ տրված 12.01.2022թ.),

«Արարատի մարզի Հովտաշատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Հ.Եգորյանի (պետական ռեգիստրի գրանցման համար՝ 77.210.00687),

«Արարատի մարզի Հովտաշատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչներ

Ք. Դարբինյանի (լիազորագիր՝ տրված 13.01.2022թ.),

Գ. Կարապետյանի (լիազորագիր՝ տրված 29.01.2022թ.),

«Բեսթ Բաս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Թ. Շաքարյանի (լիազորագիր՝ տրված 31.01.2022թ.),

քննելով «Արարատի մարզի Հովտաշատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար ավտոբուսային (միկրոավտոբուսային) փոխադրումների ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱՄՀՀՄԴ-ԳՀԾՁԲ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Վագտրանս» ՍՊԸ-ի կողմից

10.01.2022թ. ներկայացված և 10.01.2022թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու՝ ԳԲՔԱ-ՆԳ-2022/03 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>«Վագտրանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Վագտրանս» ՍՊԸ-ն (հետայսու՝ Ընկերություն) 10.01.2022թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Արարատի մարզի Հովտաշատի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի /այսուհետև նաև՝ Պատվիրատու/ կարիքների համար հայտարարվել է Ավտոբուսային (միկրոավտոբուսային) փոխադրումների ծառայությունների ձեռքբերման նպատակով «ԱՄՀՀՄԴ-ԳՀԾՁԲ-22/1» ծածկագրով գնման ընթացակարգ /այսուհետև նաև՝ Ընթացակարգ/, որին մասնակցելու նպատակով հայտ է պատրաստել նաև «Վագտրանս» ՍՊԸ-ն:

Ըստ Ընթացակարգի հրավերի՝ հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Արարատի մարզ գ. Հովտաշատ, Բաղրամյան 96 հասցեով, փաստաթղթային ձևով մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 7-րդ օրվա ժամը 11:00-ը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.01.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության (կցվում է) համաձայն՝ մասնակցության հայտեր են ներկայացրել միայն «Բեսթ բաս» ՍՊԸ-ն և «Էլիտբաս» ՍՊԸ-ն:

Մինչդեռ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում մասնակցության հայտով Ընթացակարգի հրավերում նշված հասցեյով ներկայացել է նաև «Վագտրանս» ՍՊԸ-ն և դեռ ավելին, ներկա գտնվել հայտերի բացման նիստին և մասնակցել ամբողջ ընթացքին:

Արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 05.01.2022թ. հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին հայտարարաություն և սահմանվել անգործության ժամկետ, որի ավարտից հետո ընտրված մասնակցին կառաջարկվի կնքել պայմանագիր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2.Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Վագտրանս» ՍՊԸ-ին զրկելով հայտը ներկայացնելու/հանձնելու իրավունքից, այսինքն՝ զրկելով վերջինիս մասնակցության իրավունքից լիարժեք օգտվելու հնարավորությունից՝ գնահատող հանձնաժողովը գործել է ոչ իրավաչափ.

Մասնավորապես՝

«Վագտրանս» ՍՊԸ-ն նախապես ծանոթանացել է հրավերի պահանջներին, մասնավորապես՝ հայտերի ներկայացման և հայտերի բացման անցկացման վայրի, տեղի և ժամի մասին, որը տեղի էր ունենալու 03.01.2022թ. ժամը 11:00-ին Արարատի մարզ գ.Հովտաշատ, Բաղրամյան 96-ում: Բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ հասցեում նշված չէր սենյակի համարը:

«Վագտրանս» ՍՊԸ-ի ներկայացուցիչը ներկայացել է Արարատի մարզ գ. Հովտաշատ, Բաղրամյան 96 հասցե 03.01.2022թ. 10:54 րոպե և չգտնելով, թե կոնկրետ որ սենյակում է անցկացվում հայտերի ներկայացման գործընթացը՝ քիչ անց զանգահարել ընթացակարգի քարտուղարին:

Հեռախոսազանգին պատասխան ստացվել և միայն 11:00 րոպեին՝ նոր միայն քարտուղարը դիմավորել է և ուղեկցել սենյակ, և նոր միայն վերցրել հայտի փաթեթը՝ ինչին ի պատասխան ներկա գտնվող մեկ այլ ընկերության ներկայացուցիչ հայտնել է, որ արդեն ժամը 11:01 է և իրավունք չունի ընթացակարգի քարտուղարը ծրարը վերցնելու:

Մինչդեռ «Վագտրանս» ՍՊԸ-ի ներկայացուցիչը մուտք է գործել Ընթացակարգի հրավերում նշված տարածք 03.01.2022թ. ժամը 10:54:

Գտնում ենք, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հրավերում չի նշվել, թե կոնկրետ որ սենյակ պետք է ներկայացնել մասնակցության հայտերը՝ գնահատող հանձնաժողովը առնվազն պետք է ապահովեր իր ներկայացուցչի ներկայությունը շենքի անցագրային կետում՝ ներկայացած մասնակիցների անխափան մուտք գործելը ապահովելու նպատակով: Մինչդեռ նման իրավիճակում մասնակիցը թողնվել է, ըստ էության բախտի քմահաճույքի:

Վերոհիշյալի արդյունքում հանձնաժողովը դրսևորել է խտրական մոտեցում մասնակիցների նկատմամբ, հայտերի ներկայացման ժամանակ չի ապահովել միասնական կանոններով և ոչ խտրական հիմունքներով նիստի անցկացում, մասնակիցների համար մասնակցելու իրավահավասարություն, որն էլ իր հերթին հանգեցրել է գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունքի խախտմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է պարտավորեցնել «ԱՄՀՀՄԴ-ԳՀԾՁԲ-22/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարելու ավտոբուսային (միկրոավտոբուսային) փոխադրումների ծառայությունների ձեռքբերման նպատակով «Արարատի մարզի Հովտաշատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար հայտարարված «ԱՄՀՀՄԴ-ԳՀԾՁԲ-22/1» ծածկագրով գնման ընթացակարգը:

Այնուհետև՝ 19.01.2022թ. ներկայացված բողոքի լրացմամբ Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում քննվող «Վագտրանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ Պատվիրատուի կողմից սույն բողոքի շրջանակներում ներկայացված դիրքորոշման և փաստերի կապակցությամբ հայտնում ենք հետևյալը՝

«Վագտրանս» ՍՊԸ-ի ներկայացուցիչը 03.01.2022թ. 10:29 րոպե զանգահարել է ընթացակարգի քարտուղարին՝ ճշտելու Բազրամյան 96 հասցեի վայրը.

«Վագտրանս» ՍՊԸ-ի ներկայացուցիչը ներկայացել է Արարատի մարզ գ. Հովտաշատ, Բաղրամյան 96 հասցե 03.01.2022թ. 10:54 րոպե և չգտնելով, թե կոնկրետ որ սենյակում է անցկացվում հայտերի ներկայացման գործընթացը՝ քիչ անց զանգահարել է ընթացակարգի քարտուղարին:

Հեռախոսազանգին պատասխան ստացվել և միայն 11:01 րոպեին՝ նոր միայն աշխատակիցը դիմավորել է և ուղեկցել սենյակ և նոր միայն վերցրել հայտի փաթեթը՝ ինչին ի պատասխան ներկա գտնվող մեկ այլ ընկերության ներկայացուցիչ հայտնել է, որ արդեն ժամը 11:01 է և իրավունք չունի ընթացակարգի քարտուղարը ծրարը վերցնելու:

Այնուհետև 03.01.2022թ. 11:04-ին կատարվել է զանգ Ընթացակարգի քարտուղարին, որով խնդրել ենք հայտնել արդյոք իրավաչափ էր գնահատող հանձնաժողովի գործողությունները՝ մեր կողմից ներկայացված հայտի փաթեթը չվերցնելու փաստի կապակցությամբ:

Ինչ վերաբերվում է այն հանգամանքին, որ շենքի միջանցքում եղել են մարդիկ՝ 4-6 հոգի, որոնցից հնարավոր էր հարցնել սենյակի վայրը՝ որտեղ անց էր կացվելու հայտերի բացումը, ապա հայտնում ենք, որ 03.01.2021թ. ժամը 10:54 րոպեի շրջանակներում իսկապես եղել են աշխատակիցներ, սակայն հաշվի առնելով որ տիրում էր տոնական տրամադրություն, մասնավորապես՝ տոնական սեղան, որի վրա առկա էր նաև ալկոհոլ և այդ տղամարդիկ զբաղված էին ուտել-խմելու գործընթացով, իսկ «ՎԱԳՏՐԱՆՍ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը, ով ներկայացել էր հայտերի բացման նիստին կինն էր, ուստի հնարավոր չէր խմած տղամարդկանցից

Ի մի բերելով վերը նշված բոլոր փաստական հանգամանքները՝ գտնում ենք, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հրավերում չի նշվել, թե կոնկրետ որ սենյակ պետք է ներկայացնել մասնակցության հայտերը, իսկ մասնակիցներին մուտքի մոտ չեն դիմավորել գնահատող հանձնաժողովի ներկայացուցիչը՝ ուստի հայտերի ներկայացման

ժամանակ չի ապահովել միասնական կանոններով և ոչ խտրական հիմունքներով նիստի անցկացում, մասնակիցների համար մասնակցելու իրավահավասարություն, որն էլ իր հերթին հանգեցրել է գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունքի խախտմանը:

Միևնույն ժամանակ հայտնում ենք, որ «Վագտրանս» ՍՊԸ-ն պատրաստ էր տվյալ ընթացակարգին առաջարկել ավելի շահեկան գին, քան առաջարկել է տվյալ ընթացակարգով հաղթող մասնակիցը: Ուստի նման պարագայում տվյալ ընթացակարգի չեղարկումը և «Վագտրանս» ՍՊԸ-ի մասնակցության իրավունքի վերականգնումը օգտավետ կլինի պետական բյուջեի միջոցների խնայման տեսանկյունից:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք բավարարել «Վագտրանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած բողոքը»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 13.01.2022թ. ժամը 09:20-ին և 02.02.2022թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրվածը:

<u>2. «Արարատի մարզի Հովտաշատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Արարատի մարզի Հովտաշատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը, (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ, բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Հարգելի պարոն Ներսիսյան, ի պատասխան Ձեր 10.01.2022թ ծանուցման, հայտնում եմ Ձեզ, որ «ՀՀ Արարատի մարզի Հովտաշատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Հասմիկ Պարույրի Եգորյանի, ով գործում է դպրոցի կանոնադրության հիման վրա, 2021թ դեկտեմբերի 25-ին կայացած գնահատող հանձնաժողովի N1 արձանագրության հիման վրա հրապարակել է ԱՄՀՀՄԴ-ԳՀԾՁԲ-22/1 ծածկագրով գնման ընթացակարգը: Գնման ընթացակարգը կազմակերպվել է Գնանշման հարցման ձևով: «ՀՀ Արարատի մարզի Հովտաշատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը գտնվում է Արարատի մարզ, գ. Հովտաշատ, Բաղրամյան 110 հասցեում, սակայն կապված դպրոցի հիմնանորոգման հետ դպրոցն իր գործունեությունը մասամբ իրականացնում է

Հովտաշատի համայնքապետարանում՝ գ. Հովտաշատ Բաղրամյան 96 հասցեում, ուստի և մրցույթի հայտերի ընդունման վերջնաժամկետին, հայտերի բացումը ևս տեղի ունեցավ Բաղրամյան 96 հասցեում, 2022թ հունվար 03-ին ժամը 11:00-ին, ինչպես նշված էր մրցույթի հրավերում:

2022թ հունվարի 03-ին մասնակցության հայտ են ներկայացրել «Էլիտբաս» ՍՊԸ-ն, ժամը 10:55 և «Բեսթ Բաս» ՍՊԸ-ն ժամը 10:56: Հայտերը ընդունել է գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Քրիստինե Դարբինյանը և անմիջապես գրանցել գրանցամատյանում (կից ուղարկում ենք լուսապատճենը): «Վագտրանս» ՍՊԸ-ն նախապես չէր ներկայացրել մրցույթի անհրաժեշտ փաթեթը, ինչպես նաև ուշացել էր հայտերի բացման նիստից: Հայտերի բացման նիստը մեկնարկել է 03.01.2022թ 11:00-ին ինչպես և նշված էր հրավերում: Նիստի բացումից հետո ժամը 11:01-ին «Վագտրանս» ՍՊԸ-ի ներկայացուցիչը զանգահարել է գնահատող հանձնաժողովի քարտուղարին և փորձել կրկին հասցե ճշտել, այնինչ նույն օրը 10:29-ին, երբ «Վագտրանս» ՍՊԸ-ի ներկայացուցիչը կրկին զանգել էր խնդրելու, որ փաթեթը առանց ծրարի բերի և տեղում պատճենելուց հետո նոր փակի ծրարը և հանձնի քարտուղարին, քարտուղարը մանրամասն ներկայացրել էր և՛ շինության տեղը և՛ սենյակի, իսկ այդ խնդրանքը մերժել, քանի որ այդ քայլով կխախտվեր «Գնումներ մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, այն է՝

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

Հովտաշատի համայնքապետարանը, որը գտնվում է Բաղրամյան 96 հասցեում, միահարկ մայրուղուն կից կառույց է, ակնհայտ տեսանելի վայրում: Շենքն ունի մեկ մուտք՝ կենտրոնից: Մուտքից ներս՝ նախասրահում գտնվել են աշխատողներ, ովքեր տեղեկացված են եղել մրցույթի մասին և ընթացակարգի մյուս երկու մասնակիցներին էլ ուղեկցել են սենյակ: «Վագտրանս» ՍՊԸ-ի ներկայացուցիչը 11:01-ին զանգահարելու ժամանակ շենքի տարածքում դեռ չի գտնվել: Զանգահարելուց հետո արդեն իսկ բացման նիստը սկսված, ներողություն եմ խնդրել մասնակիցներից և գնահատող հանձնաժողովից, կողքի սենյակից մեկ այլ աշխատակցի խնդրել եմ դիմավորել «Վագտրանս» ՍՊԸ-ի ներկայացուցչին և ուղեկցել սենյակ: Աշխատակիցը Հովտաշատի համայնքապետարանից որոշակի հեռավորության վրա՝ փողոցին հարակից վայրում հանդիպել է նոր ժամանած «Վագտրանս» ՍՊԸ-ի ներկայացուցիչներին և ուղեկցել է սենյակ: Մինչ «Վագտրանս»

ՍՊԸ-ի ներկայացուցչի սենյակ գալը նաև ներկա մասնակիցների առարկությանը հանդիպելով, գնահատող հանձնաժողովը, ինչպես նաև ներկա մասնակիցները ֆիքսեցին և՛ զանգի և՛ մուտքի ժամերը:

- Մուտքային զանգ - 11:01
- Մուտք սենյակ - 11:04

(կից ներկայացնում ենք նաև զանգերի արտատպումը)

Մինչև ներս մտնելը, հանձնաժողովի անդամները և ներկա մասնակիցները արդեն իսկ առարկեցին հայտերի բացման նիստի ժամից ուշացած «Վագտրանս» ՍՊԸ-ի հայտն ընդունելու փաստը:

Բողոքում առկա են իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն, մասնավորապես՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի իրենց դիմավորելու փաստը (քարտուղարը չի բացակայել սենյակից) և «Վագտրանս» ՍՊԸ-ի ներկայացուցչի հեռախոսազանգի ժամը (քանզի հեռախոսակապ ապահովող ընկերությունը չի տրամադրում մուտքային զանգերի քաղվածքը, ներկայացնում ենք հեռախոսազանգերի արտատպումը, իսկ «Վագտրանս» ՍՊԸ-ի տնօրեն Գ. Հովհաննիսյանը կարող է ներկայացնել հեռախոսազանգերի ելքային քաղվածքը՝ որպես փաստացի ապացույց): Չհամապատասխանող տեղեկատվություն էր նաև գործի հակիրճ նկարագրության և բողոքի փաստերում նշված այն հանգամանքը, թե իբրև իրենք ներկա են գտնվել հայտերի բացման նիստին և մասնակցել ամբողջ ընթացքին: «Վագտրանս» ՍՊԸ-ի ներկայացուցչի սենյակը լքելուց հետո նոր շարունակվել է հայտերի բացման նիստը»:

«Արարատի մարզի Հովտաշատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով հրավիրված նիստերի վերաբերյալ, մասնակցել է 13.01.2022թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստին, ինչպես նաև ապահովել է Պատվիրատուի ներկայացուցիչների մասնակցությունը 13.01.2022թ. ժամը 09:20-ին և 02.02.2022թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստերին, ովքեր իրենց հերթին պնդել են ներկայացված դիրքորոշումը:

<u>3. «Բեսթ Բաս» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Բեսթ Բաս» ՍՊԸ-ի կողմից 31.01.2022թ. ներկայացվել է գրավոր միջնորդություն՝ ԳԲՔԱ-ՆԳ-2022/03 բողոքի շրջանակներում իրեն որպես երրորդ կողմ ներգրավելու վերաբերյալ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից միջնորդությունը բավարարվել է:

«Բեսթ Բաս» ՍՊԸ-ն, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը 02.02.2022թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստին և ԳԲՔԱ-ՆԳ-2022/03 բողոքի շրջանակներում հայտնել է հետևյալը.

««Բեսթ Բաս» ՍՊԸ-ն ուսումնասիրել է 07.01.2022թ. «Վագտրանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/03 բողոքը, որով հայտնած տեղեկությունները լիովին չեն համապատասխանում իրականությանը:

Այսպես, 07.01.2022թ. «Վագտրանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/03 բողոքի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ իբրև թե «ՎԱԳՏՐԱՆՍ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը ներկայացել է Արարատի մարզ գ. Հովտաշատ, Բաղրամյան 96 հասցե 03.01.2022թ. 10:54 րոպե և չգտնելով, թե կոնկրետ որ սենյակում է անցկացվում հայտերի ներկայացման գործընթացը՝ քիչ անց զանգահահարել է ընթացակարգի քարտուղարին:

«Վագտրանս» ՍՊԸ-ն հայտնել է, որ իբրև թե «ՎԱԳՏՐԱՆՍ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը մուտք է գործել նշված տարածք 03.01.2022թ. ժամը 10:54: Այնուհետև մինչև 11:00 իբրև թե «Վագտրանս» ՍՊԸ-ն չի գտել հայտերը հանձնելու սենյակը, որից հետո զանգել է հանձնաժողովի քարտուղարին ու խնդրել իրեն դիմավորել:

Այս հարցի հետ կապված խնդրում եմ նկատի ունենալ, որ

1. Հայտերը ներկայացնելու սենյակում «Վագտրանս» ՍՊԸ-ից նիստերի քարտուղարը զանգը ստացել է, երբ արդեն սկսվել է հայտերի բացման ընթացքը, այն է՝ 11:01, այսինքն հայտերի բացման վերջնաժամկետից հետո: Նիստերի քարտուղարը այդ զրույցի ժամանակ հեռախոսով բացատրել է շենքի գտնվելու հստակ վայրը/դիրքը:

2. Նիստի քարտուղարը այդ զանգից հետո բանավոր հայտնել է, որ ևս մեկ մասնակից մոտենում է շենքին և ներողություն խնդրելով առաջարկել է այլ աշխատակցի շենքի մուտքի մոտից դիմավորել այդ նոր մասնակցին:

3. «Վագտրանս» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հայտերը հանձնելու սենյակ մուտք է գործել 11:04: Սակայն մենք այդ մրցույթի երկու մասնակիցներով առարկել ենք «Վագտրանս»

ՍՊԸ-ի հայտը վերցնելու դեմ ասելով, որ հանձնաժովը իրավունք չունի հայտերը ներկայացնելու ժամկետը լրանալուց հետո վերցնի որևէ հայտի փաթեթ: Հանձնաժողովը դրա հետ համաձայնվել է ու չի վերցրել ուշ ներկայացրած հայտը:

4. Արարատի մարզ գ. Հովտաշատ, Բաղրամյան 96 հասցեում գտնվող շինությունը մեկ հարկանի է, որտեղ առկա են ընդամենը մի քանի դուռ, մուտքը ազատ է, միջանցքում մշտապես գտնվում են բազմաթիվ մարդիկ, այդ թվում նաև անցագրային հատվածում նստած են աշխատակիցներ և նման պարագայում հայտերը հանձնելու սենյակը գտնելը ընդհանրապես իրենից դժվարություն չէր ներկայացնում:

Վստահաբար հայտնում ենք, որ «Վագտրանս» ՍՊԸ-ն ուշացումով ժամանելով հայտերի բացման վայր (Արարատի մարզ գ. Հովտաշատ, Բաղրամյան 96 հասցեում գտնվող շինություն), բողոքարկման եղանակով փորձում է վերացնել իր թույլ տված սխալը և իր համար ստեղծել հնարավորություն այս մրցույթին ևս մեկ անգամ մասնակցելու համար:

Հարգելի պարոն Ներսիսյան, խնդրում եմ հաշվի առնել, որ «Վագտրանս» ՍՊԸ-ն չի ներկայացրել որևէ ապացույց այն մասին, որ ինքը իբրև թե 10:54 մուտք է գործել Արարատի մարզ գ. Հովտաշատ, Բաղրամյան 96 հասցեյում գտնվող շինություն և մինչև 11:01 իբրև թե փորձել է գտնել հայտերը հանձնելու սենյակը: Մինչդեռ այդ նիստին մասնակցող բոլոր անձինք, թե հայտ ներկայացնող ընկերությունները և թե հանձնաժողովի աշխատակիցները կարող են հավաստել, որ այս դեպքում խոսքը գնացել է նրա մասին, որ «Վագտրանս» ՍՊԸ-ն շինություն մոտենալուց է եղել 11:01 ոչ շուտ, ինչի մասին վկայել է նաև նրա հեռախոսազրուցը՝ հանձնաժողովի քարտուղարի հետ:

Խնդրում եմ նման չհիմնավորված բողոքը չբավարարել և չչեղարկել հայտարարված «ԱՄՀՀՄԴ-ԳՀԾՁԲ-22/1» ծածկագրով ընթացակարգը»:

<u>4. ԳԲՔԱ-ՆԳ-2022/03 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2022/03 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Արարատի մարզի Հովտաշատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար ավտոբուսային (միկրոավտոբուսային) փոխադրումների ծառայությունների ձեռքբերման

նպատակով հայտարարվել է «ԱՄՀՀՄԴ-ԳՀԾՁԲ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

2. «ԱՄՀՀՄԴ-ԳՀԾՁԲ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասին հայտարարությամբ սահմանվել է, որ հայտերի բացումը տեղի կունենա Արարատի մարզ գ. Հովտաշատ, Բաղրամյան 96 հասցեում, 2022թ. հունվարի 03-ին, ժամը 11:00-ին:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.01.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել «Էլիտբաս» և «Բեսթ Բաս» ՍՊ ընկերությունները:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Վագտրանս» ՍՊԸ-ի կողմից 10.01.2022թ. ներկայացված բողոքը, «Արարատի մարզի Հովտաշատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գրությունը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև «Բեսթ Բաս» ՍՊԸ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ (...) Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով:

(...)

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4-րդ կետի 4.1 և 4.2 ենթակետերի համաձայն՝

4.1 Սույն ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը հանձնաժողովին ներկայացնում է հայտ: Հայտը սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

Մասնակիցը կարող է հայտ ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի, այնպես էլ մի քանի կամ բոլոր չափաբաժինների համար:

Հայտը ներկայացվում է մինչև դրա համար սույն հրավերով սահմանված ժամկետի ավարտը:

Հայտի պատրաստման կարգը նկարագրված է սույն հրավերի 2-րդ մասում՝ գնանշման հարցման հայտերը պատրաստելու հրահանգում:

4.2 Ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել հանձնաժողովին ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակվելու օրվանից հաշված 7-րդ օրվա ժամը 11:00-ն, Արարատի մարզ Բաղրամյան 96 հասցեով:

(...)

Այսպես, «Արարատի մարզի Հովտաշատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար ավտոբուսային (միկրոավտոբուսային) փոխադրումների ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱՄՀՀՄԴ-ԳՀԾՁԲ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.01.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել «Էլիտբաս» և «Բեսթ Բաս» ՍՊ ընկերությունները:

«Վագտրանս» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

««Վագտրանս» ՍՊԸ-ի ներկայացուցիչը ներկայացել է Արարատի մարզ գ. Հովտաշատ, Բաղրամյան 96 հասցե 03.01.2022թ. 10:54 րոպե և չգտնելով, թե կոնկրետ որ սենյակում է անցկացվում հայտերի ներկայացման գործընթացը՝ քիչ անց զանգահարել ընթացակարգի քարտուղարին:

Հեռախոսազանգին պատասխան ստացվել և միայն 11:00 րոպեին՝ նոր միայն քարտուղարը դիմավորել է և ուղեկցել սենյակ, և նոր միայն վերցրել հայտի փաթեթը՝

ինչին ի պատասխան ներկա գտնվող մեկ այլ ընկերության ներկայացուցիչ հայտնել է, որ արդեն ժամը 11:01 է և իրավունք չունի ընթացակարգի քարտուղարը ծրարը վերցնելու:

Մինչդեռ «Վագտրանս» ՍՊԸ-ի ներկայացուցիչը մուտք է գործել Ընթացակարգի հրավերում նշված տարածք 03.01.2022թ. ժամը 10:54:

Գտնում ենք, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հրավերում չի նշվել, թե կոնկրետ որ սենյակ պետք է ներկայացնել մասնակցության հայտերը՝ գնահատող հանձնաժողովը առնվազն պետք է ապահովեր իր ներկայացուցչի ներկայությունը շենքի անցագրային կետում՝ ներկայացած մասնակիցների անխափան մուտք գործելը ապահովելու նպատակով: Մինչդեռ նման իրավիճակում մասնակիցը թողնվել է, ըստ էության բախտի քմահաճույքի»:

«Արարատի մարզի Հովտաշատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենը և լիազորված ներկայացուցիչը քննության ընթացքում հայտնել են, որ «Վագտրանս» ՍՊԸ-ի ներկայացուցիչներին 03.01.2022թ. դիմավորել է դպրոցի աշխատակիցը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 27.01.2022թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/2/1563-2022 գրությամբ դիմել է բողոքաբերին և ներկայացրել պահանջ ապահովելու 03.01.2022թ. «Վագտրանս» ՍՊԸ-ի հայտ պարունակող ծրարը Պատվիրատուին ներկայացնող անձի (անձանց) մասնակցությունը բողոքի քննության նպատակով հրավիրված նիստին:

Միևնույն ժամանակ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 27.01.2022թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/2/1562-2022 գրությամբ դիմել է Պատվիրատուին և ներկայացրել պահանջ ապահովելու «Վագտրանս» ՍՊԸ-ի ներկայացուցիչներին 03.01.2022թ. դիմավորած անձի (անձանց) մասնակցությունը բողոքի քննության նպատակով հրավիրված նիստին:

Ներկայացված պահանջը բողոքաբերի կողմից չի կատարվել, և վերջինս 02.02.2022թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստին չի ապահովել 03.01.2022թ. «Վագտրանս» ՍՊԸ-ի հայտ պարունակող ծրարը Պատվիրատուին ներկայացնող անձի (անձանց) մասնակցությունը:

Պատվիրատուի կողմից ներկայացված պահանջը կատարվել է, և վերջինս ապահովել է «Վագտրանս» ՍՊԸ-ի ներկայացուցիչներին 03.01.2022թ. դիմավորած անձ՝ Գայանե Նորիկի Կարապետյանի մասնակցությունը 02.02.2022թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստին, ով հայտնել է հետևյալը.

«Հայտնել է, որ աշխատում է «Արարատի մարզի Հովտաշատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, աշխատել են այդ օրվանից և գտնվել է կողքի սենյակում: Տնօրենը խնդրել է և ինքը դուրս է եկել, որպեսզի դիմավորի «Վագտրանս» ՍՊԸ-ի ներկայացուցիչներին: Դուրս է եկել դուրս՝ դիմացից երկու մուտք ունի:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի այն հարցին թե՞ դիմավորել է շենքի դրսից, թե՞ ներսից, ներկայացուցիչը պատասխանեց, որ դիմավորել է շենքի դրսից:

Շարունակելով հայտնեց, որ դուրս է եկել դուրս, ոչ ոք չի եղել, գնացել է դեպի կողքի մուտք, տեսել է, որ «Վագտրանս» ՍՊԸ-ի ներկայացուցիչները՝ 2 հոգի, գալիս են այդ կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի այն հարցին, արդյո՞ք շենքը ունի երկու մուտք, պատասխանել է, որ ոչ, բակը ունի երկու մուտք, ինքը դուրս է եկել շենքի մուտքից, կանգնել աստիճանների վրա, դիմացը նայել է, դրսում ոչ ոք չի եղել, թեքվել է դեպի շենքի կողքի ավտոկայանատեղի, տեսել է, որ իրենք այն կողմից գալիս են՝ մի կին և մի տղամարդ: Դիմավորել է, ուղեկցել դեպի ձախ տեղակայված հանձնաժողովի նիստի անցկացման սենյակ»:

Այսպիսով՝ բողոքով և բողոքի լրացմամբ վկայակոչված փաստական հանգամանքների ուսումնասիրության և բողոքի քննության ընթացքում Պատվիրատուի կողմից ներկայացված դիրքորոշման, ինչպես նաև բողոքի քննության նպատակով հրավիրված նիստերի ընթացքում կատարված պարզաբանումների համադրման արդյունքում, հարկ եմ համարում արձանագրել, որ «Վագտրանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պատճառաբանությունները, այն է՝ «Վագտրանս» ՍՊԸ-ի ներկայացուցիչը մուտք է գործել Ընթացակարգի հրավերում նշված տարածք 03.01.2022թ. ժամը 10:54-ին, սակայն չի գտել, թե որ սենյակում է անցակցվում հանձնաժողովի նիստը, որևէ կերպ չեն հիմնավորվել, այլ ընդհակառակը՝ 02.02.2022թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստին, Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է, որ Ընկերության ներկայացուցիչներին դիմավորել է շենքի դրսից, այսինքն՝ վերջիններս 11:00-ին չեն գտնվել Արարատի մարզ գ. Հովտաշատ, Բաղրամյան 96 հասցեում գտնվող վարչական շենքում:

Ինչ վերաբերում է Ընկերության այն պնդմանը, որ «Վագտրանս» ՍՊԸ-ի ներկայացուցիչը մուտք է գործել Ընթացակարգի հրավերում նշված տարածք 03.01.2022թ. ժամը 10:54-ին և հաշվի առնելով այն հանգամանքը, որ հրավերում չի նշվել, թե կոնկրետ որ սենյակ պետք է ներկայացնել մասնակցության հայտերը, ինչպես նաև այն, որ

գնահատող հանձնաժողովն առնվազն պետք է ապահովեր իր ներկայացուցչի ներկայությունը շենքի անցագրային կետում՝ ներկայացած մասնակիցների անխափան մուտք գործելն ապահովելու նպատակով, ինչը պատճառ է հանդիսացել հայտը սահմանված ժամկետում չներկայացնելուն, ապա հարկ եմ համարում արձանագրել, որ Արարատի մարզ Բաղրամյան 96 հասցեում գտնվող վարչական շենքը հանդիսանում է մեկ հարկանի կառույց՝ բաղկացած շուրջ 5 աշխատասենյակից:

Վերոնշվածի հաշվառմամբ գտնում եմ, որ Ընկերության բողոքը հիմնավոր չէ և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Վագտրանս» ՍՊԸ-ի կողմից 10.01.2022թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**